ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ք. Երևան **30.08.2017 թ.**

2017 թվականի օգոստոսի 30-ին, ժամը 11.00-ին ՀՀ առողջապահության նախարարությունում կայացավ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) նիստը:

Մասնակցում էին.

Լ. Ալթունյան	- ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Ասատրյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Տ. Խաչատրյան	-ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Մ. Մինասյան	- ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողական ծառայության պետ
Ս. Վարդանյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Է. Բարսեղյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր
Հ.Այվազյան	- ՀՀ վարչապետի ներկայացուցիչ, ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար

Հրավիրվածներ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ Ա.Ասոյան
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավար Գ.Հովհաննիսյան

Կառավարման խորհրդի նախագահի առաջարկությամբ Խորհրդի քարտուղարության պատասխանատուն ներկայացրեց Խորհրդի կազմը, հայտնեց, որ նիստն իրավազոր է: Խորհրդի հաստատմանը ներկայացվեց նիստի օրակարգը՝ հետևյալ երեք հարցով.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում **Արտաշես Սերգեյի Ջավադյանի** վերաբերյալ որոշման կայացում,

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում **Գոհար Վազգենի Փանաջյանի** վերաբերյալ որոշման կայացում.

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում **Ալիկ Ստեփանի Հակոբյանի** վերաբերյալ որոշման կայացում:

Խորհուրդը միաձայն հաստատեց ներկայացված օրակարգը:

Խորհրդի նիստը բացեց ՀՀ առողջապահության նախարար Լ.Ալթունյանը:

1. Մ.Մինասյանը հետաքրքրվեց՝ արդյո՞ք Տեսչական մարմնի ղեկավարը հաստատում է, որ խորհրդի անդամներին ուղարկված թեկնածուների ինքնակենսագրական տվյալները հավաստի են և համապատասխանում են տվյալ պաշտոնների զբաղեցման համար սահմանված պահանջներին:

Գ.Հովհաննիսյանը նշեց, որ հավաստի են և համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Հ.Պողոսյանը փաստեց, որ թեկնածուների ինքնակենսագրական տվյալներում նշված չէ համակարգման ոլորտը, և առաջարկեց, որպեսզի հրավիրելուց առաջ ներկայացվի յուրաքանչյուրի կողմից իրականացվելիք աշխատանքների և պատասխանատվության շրջանակը:

Վ.Պետրոսյանն առաջարկեց, նախքան օրակարգի բուն հարցին անցնելը և որոշում կայացնելը, մանրամասնել՝ արդյո՞ք հրապարակվել է առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնի հայտարարություն, ինչ սկզբունքով են ընտրվել թեկնածուները:

Գ.Հովհաննիսյանը պարզաբանեց, որ այդպիսի հայտարարություն չի եղել, թեկնածու ընտրելիս հաշվի են առնվել նրանց մասնագիտական գիտելիքները և աշխատանքային փորձը:

Հ.Այվազյանն առաջարկեց ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ռիսկերի գնահատումը և վերահսկողությունը չիրականացվեն նույն անձի կողմից, քանի որ առկա է շահերի բախում:

Լ.Ալթունյանը նշեց, որ առաջարկը տրամաբանական է, բայց հաստիքացուցակով նախատեսված է 3 տեղակալի պաշտոն, իսկ աշխատանքի ծավալը բավականին մեծ է:

Ա.Ասատրյանն առաջարկեց տալ 3 ամիս ժամկետ, որից հետո քննարկել այդ ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, գնահատել արդյունքները և տալ եզրակացություն:

Գ.Հովհաննիսյանն առաջարկեց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու համար Արտաշես Ջավադյանի թեկնածությունը՝ հակիրճ ներկայացնելով նրա իրավասության շրջանակները, մասնավորապես նշելով, որ նա համակարգելու է հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության և ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչությունները, ինչպես նաև սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի աշխատանքը:

Ա.Ջավադյանը մանրամասն ներկայացրեց կենսագրությունը, աշխատանքային փորձը, մոտեցումները: Արտաշես Ջավադյանը նաև ներկայացրեց իր տեսլականը՝ Տեսչական մարմնի աշխատանքների կազմակերպման առումով: Մասնավորապես նա նշեց, որ առաջնային են և ռազմավարական զարգացման մասով ավելի կարևոր վերահսկողական գործառույթները և ստուգումները, ինչը վերահսկողության գործառույթների գործիքներից է: Ստուգումները թեմատիկ են, և պետք է մտածել ռիսկերի կառավարման համակարգի հստակեցման մասին՝ ստեղծելով լավ բազա,

մեթոդաբանություն, ստուգաթերթերի վերանայում և նորերի հաստատում, իսկ մյուս ուղղությունը կանխարգելիչ աշխատանքներն են:

Հ.Պողոսյանը կարծիք հայտնեց, որ հակված է վստահելու և՛ նախարարին, և՛ տեսչության պետին, քանի որ նրանք ճանաչում են թեկնածուին, նշեց, որ շատ պատասխանատու օղակ է դրված նրա վրա, և հետագայում գնահատական կտրվի նրա կատարած աշխատանքին:

Գ.Հովհաննիսյանն առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն քվերակության արդյունքներով՝ 9 կողմ, 0 դեմ, Խորհուրդը որոշեց հավանություն տալ Արտաշես Սերգեյի Ջավադյանի թեկնածությանը:

Վ. Պետրոսյանը կարծիք հայտնեց, որ պետք է ներկայացվեն մյուս տեղակալների համակարգման ոլորտները, այնուհետև քվեարկել:

Մ. Մինասյանը նշեց, որ, ըստ իրեն, ճիշտ կլինի վերանայել սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի աշխատանքի համակարգման պատասխանատուի գործառույթները՝ վերջինիս թողնելով միայն տվյալ գործառույթի մեթոդական ապահովումը:

Լ. Ալթունյանը նշեց, որ հնարավոր է, որ որոշ ժամանակ անց տեղակալների համակարգման ոլորտները վերաբաշխվեն:

2. Գ.Հովհաննիսյանը ներկայացրեց հաջորդ թեկնածուին՝ Գոհար Փանաջյանին, նշեց, որ նախատեսվում է, որ նա կհամակարգի բուժօգնության և սպասարկման, կլինիկական ստանդարտների և դեղերի վերահսկողության ոլորտները:

Գ.Փանաջյանը, իր աշխատանքային փորձից ելնելով, ներկայացրեց, թե ինչպես է աշխատելու վստահված ոլորտում: Նա նշեց, որ համակարգել է բուժօգնության սպասարկման, կլինիկական ստանդարտների, ինչպես նաև դեղերի վերահսկողության ոլորտները: Ունենալով վերահսկողության առումով բավականին փորձ՝ նա ընդգծեց, թե որոնք են գերակայությունները, նախանշվող աշխատանքները, ինչպես նաև այն ռազմավարական ուղղությունները, որտեղ լուրջ աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն կա:

Հ. Պողոսյանը հետաքրքրվեց, թե ինչ խնդիրներ են առկա բուժօգնության որակի վերահսկման առումով, որոնք դեռևս լուծված չեն, և ինչպես է տեսնում դրանց կարգավորումը:

Գ.Փանաջյանը նշեց, որ ոլորտը շատ լայնածավալ է և վերահսկողությունը շատ բազմաշերտ, որի իրականացման համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական դաշտի փոփոխություններ՝ կիրառելով հստակ գործիքներ:

Հ. Պողոսյանը հստակեցրեց հարցը, նշելով, որ բնակչության շրջանում բժիշկների և բուժհիմնարկների նկատմամբ վստահությունը բարձր չէ, և կարծիք հայտնեց, որ Տեսչական մարմնի գործունեությամբ պայմանավորված պետք է իրավիճակը փոխվի:

Գ.Փանաջյանը վստահեցրեց, որ Տեսչական մարմինը հստակ լիազորություններ ունի, որի շրջանակներում դաշտը կվերահսկվի և պատասխանատվության միջոցներ կկիրառվեն, կարվի հնարավորը բնակչության գոհունակությունը բարձրացնելու համար:

Լ.Ալթունյանը հավելեց, որ Տեսչական մարմինը բնակչության վստահությունը վերականգնելու գործիք է, որը բացահայտում է խախտումը և արձանագրում: Իսկ մեթոդաբանությունը փոխելու լիազորությունն ավելի շատ նախարարության և ՊԱԳ-ի գործառույթներն են: Բայց և այնպես, Տեսչական մարմնի կողմից բացահայտված թերացումների համար կկիրառվեն պատժամիջոցներ:

Մ.Մինասյանը նկատեց, որ շեշտադրումը դրվում է ստուգաթերթերի վրա, և պետք է տնտեսվարողին տեղեկացնել, որ հաջորդ տարի ստուգումներ են կատարվելու: Միաժամանակ, նա նշեց, որ ստուգաթերթերի հաստատումը երկար և բարդ գործընթաց է, ինչպես են կազմակերպվելու աշխատանքները մինչև տարեվերջ, օրինակ՝ եթե «թեժ գծով» ահազանգ լինի:

Գ.Փանաջյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է Տեսչական մարմնի ներքո ունենալ «թեժ գիծ» ծառայություն և պաշտոնական կայքէջ, ուր կզետեղվի անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաև քաղաքացիները կարող են գրավոր ներկայացնել իրենց բողոքները: Վարչարարության իրականացման մյուս մեթոդաբանությունն այն է, որ, ելնելով բնակչության առողջությանը վստանգ սպառնացող իրավիճակից և դրա հրատապությունից, Տեսչական մարմինը կարող է նախաձեռնել հասցեական վարչական վարույթ, մինչև հաստատվեն գործիքակազմը, ստուգաթերթերը, ինչը կարգավորվում է «Ստուգումների մասին» ՀՀ օրենքով:

Մ.Մինասյանը կարծիք հայտնեց, որ սեփական նախաձեռնությամբ վարչարարություն իրականացնելը կարող է խնդիրներ առաջացնել տնտեսվարողների շահերի պաշտպանվածության տեսանկյունից:

Հ.Պողոսյանը հայտնեց, որ նոր օրենսդրությամբ Տեսչական մարմինը պատժիչ կառույցից դառնում է կանխարգելող և ինչ-որ չափով՝ նաև երաշխավորություն ապահովող մարմին: Այսինքն՝ սպասել ստուգաթերթերի հաստատմանը, գնալ ստուգումների, հետո հայտնաբերված խախտումների հիման վրա եզրակացություններ տալը երկար ճանապարհ է, և ճիշտ չէ Տեսչական մարմնի վրա միայն այդ խնդիրները դնելը: Նա կարծիք հայտնեց, որ պետք է գործիքակազմն այնպիսի լինի, որ Տեսչական մարմինը կանխարգելող և վստահություն ներշնչող գործունեություն իրականացնի:

Հ.Այվազյանը մտահոգություն հայտնեց, որ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթների հարուցումը, ըստ էության, գործիք է դարձել ֆորմալ ընթացակարգերից խույս տալու համար: «Վարչարարության մասին» ՀՀ օրենքում ամրագրված է. եթե կա կարգավորող օրենք, տվյալ դեպքում «Ստուգումների մասին» ՀՀ օրենքը, առաջնորդվեք դրանով: Այնուհետև՝ հարց ուղղեց Գոհար Փանաջյանին, խնդրեց նշել 3 խնդիր, որոնք նախկինում ինչ-ինչ պատճառներով արդյունավետ չէին լուծվում, իսկ նոր Տեսչական մարմնի գործունեությամբ դրանք կկանոնակարգվեն:

Գ.Փանաջյանը նշեց, որ լիարժեք վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ են արդյունավետ, փորձարկված և արդիական գործիքներ, որոնք միջազգային փորձով հաստատված են ողջ աշխարհում և տեղայնացված ամեն երկրի համար: Համալիր գործելակազմի մշակումը առաջնահերթ գերխնդիր է, մասնավորապես այն ոլորտներում, որտեղ դեռևս չկան հաստատված գործիքներ: Նախկինում, ինչ-ինչ պատճառներով, այդ գործընթացը լիարժեք վերջնական արդյունքի չհասավ, օրինակ՝ բուժօգնության ոլորտում չկա տեսչական ստուգաթերթ: Որպես երկրորդ խնդիր՝ նա նշեց արդյունավետ աշխատող թիմ ունենալը: Եվ 3-րդ՝ Տեսչական մարմինը պետք է գործի որպես մեկ միավոր բոլոր ուղղություններով, որոնք պետք է լինեն փոխլրացնող:

Լ. Ալթունյանն առաջարկեց բացի Խորհրդի նիստերից կազմակերպել նաև այլ ձևաչափի հանդիպումներ և քննարկումներ:

Վ.Պետրոսյանը դիտարկեց, որ Գոհար Փանաջյանն ունի հանրային առողջապահական կրթություն և երկար տարիների աշխատանքային փորձ այնպիսի ծրագրերում, որոնք բարձրացրել են բնակչության իրազեկման մակարդակը տարբեր հանրային առողջապահական հարցերի շուրջ, ինչը կարելի է հաշվի առնել տեսչական մարմնի հանրության իրազեկման աշխատանքները կազմակերպելիս:

Գ.Հովհաննիսյանն առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն քվերակության արդյունքներով՝ 9 կողմ, 0 դեմ, Խորհուրդը որոշեց հավանություն տալ Գոհար Վազգենի Փանաջյանի թեկնածությանը:

Հ.Պողոսյանը հարց ուղղեց Արտեմ Ասատրյանին՝ աշխատանքային օրենսդրության համակարգման շրջանակից դուրս մնացած գործառույթների, դրա հսկողությունն իրականացնելու վերաբերյալ:

Ա.Ասատրյանը նշեց, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, աշխատանքային օրենսդրության այն հոդվածների մասով, որոնց կիրարկման հետ կապված առկա են որոշակի խնդիրներ, անհրաժեշտ է Տեսչական մարմնին վերապահել համապատասխան վերահսկողական գործառույթներ:

3. Գ.Հովհաննիսյանը ներկայացրեց հաջորդ թեկնածու Ալիկ Հակոբյանին և հավելեց, որ նա համակարգելու է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչության, նաև իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժինները:

Վ.Պետրոսյանն, անդրադառնալով թեկնածուի կենսագրական տվյալներին, մտահոգություն հայտնեց, որ վերջին տարիների աշխատանքային փորձը հաշվապահական հաշվառման և քննչական ոլորտներում է, իսկ նախատեսվող համակարգման ոլորտը իրավական է:

Ա.Հակոբյանը ներկայացրեց իր աշխատանքային փորձը: Նշեց, որ վերջին տարիներին աշխատել է խոշոր հարկ վճարող հարկային տեսչությունում, որպես իրավաբանական բաժնի պետ, ապա հաշվապահական դասընթաց անցնելուց հետո, աշխատել է Ֆրանսիական Թրուա քաղաքում՝ «Սալետ» կազմակերպությունում: Ներկայացնելով իր տեսլականը Տեսչական մարմնի աշխատանքների կազմակերպման առումով՝ նա նշեց, որ մեծ ծավալի անելիքներ կան «Վարչարարության հիմունքների մասին», «Ստուգումների մասին» ՀՀ օրենքների հետ կապված, քանի որ լծակների կիրառման առումով լիազորությունները սահմանվում են այդ օրենքների հիման վրա:

Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մասով նա ընդգծեց, որ Տեսչական մարմնի վերջնական արդյունքը պետք է լինի այն, որ ՀՀ-ում ցանկացած աշխատողի մոտ ձևավորված լինի վստահության, երաշխավորվածության մթնոլորտ, որպեսզի աշխատողը վստահ լինի, որ աշխատանքային պայմանների,

առողջության անվտանգության խախտման պարագայում, կա մարմին, ուր կարող է դիմել և ստանալ հարցի լուծում ու պաշտպանվածություն:

Հ.Այվազյանը նշեց, որ թեկնածուի անցած ուղին մի կողմից լավ է փորձառության առումով, որ մանրամասն տեղեկացված է ընթացակարգերին, պետական համակարգի աշխատանքներին, մյուս կողմից մտահոգություն հայտնեց, որ կապ չի տեսնում քննչական մարմնի և առողջապահության ոլորտի միջև: Նա թեկնածուին հարցրեց, թե ինչպես է պատկերացնում աշխատողների առողջության ու անվտանգության ապահովման մասով իր անելիքը:

Ա.Հակոբյանը նշեց, որ առաջին հերթին՝ իրավական առումով և Տեսչական մարմնի մնացած բոլոր ստորաբաժանումների փաստացի գործունեության ապահովումով, որպեսզի բոլորը գործեն հնարավորինս ճիշտ: Նա հավելեց, որ աշխատելով խոշոր հարկ վճարող հարկային տեսչությունում, իրականացրել է բազմաթիվ ստուգումներ, որի ընթացքում առնչվել է չգրանցված աշխատողների ստուգման ընթացակարգին, որտեղ արծարծվել են նաև աշխատանքի, աշխատանքային անվտանգության հետ կապված հարցեր:

Հանդես գալով գործատուների անունից՝ Հ.Պողոսյանը փաստեց, որ ոչ մի գործատու դեմ չի ստուգումներին, բայց ստուգող մարմնի կեցվածքը ստուգումների ընթացքում շատ հիասթափեցնում է, ինչի հետևանքով նախաձեռնեցին այս բարեփոխումները, որպեսզի տեսչական մարմինների գործունեությունը գործատուները գնահատեն ոչ թե պատժիչ, այլ օգնող, ինչը հնարավորություն կտա, որպեսզի գործատուն ավելի ճիշտ կազմակերպի աշխատանքներն օրենքի շրջանակներում: Նա հարցրեց թեկնածուին, արդյո՞ք կկարողանա ապահովել վստահության մթնոլորտ Տեսչական մարմնի նկատմամբ, նախկինում ունենալով ավելի կոշտ վերաբերմունքի փորձ:

Ա.Հակոբյանը նշեց, որ խոշոր հարկ վճարող հարկային տեսչությունում աշխատանքի ընթացքում բոլորի նկատմամբ ծայրահեղ հարգալից վերաբերմունք է ցուցաբերել: Նա կարևորեց օրենքի ճիշտ կիրառության ապահովումը:

Հ.Այվազյանն արտահայտեց դիտարկում տեսչական մարմնի բնույթի փոփոխության մասին՝ պատժիչ մարմնից առավել կանխարգելիչ դերակատարություն ստանձնելու վերաբերյալ:

Լ.Ալթունյանն առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների ձայների 8 կողմ և 1 դեմ հարաբերակցությամբ Խորհուրդը որոշեց հավանություն տալ Ալիկ Ստեփանի Հակոբյանի թեկնածությանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Լ. ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ս. ՋԱՔԱՐՅԱՆ (բացակայել է)

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.ԱՅՎԱԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ